

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

**▶** **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2001 թվականի հոկտեմբերի 23-ի**  
**B** **2001/80/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ** **Խոշոր այրման կայաններից որոշակի աղտոտիչ նյութերի՝**  
**մթնոլորտային օդ արտանետումների սահմանափակման մասին**

(ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

թիվ էջ ամսաթիվ

**▶M1** Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի L 363 368 20.12 2003թ.  
2006/105/ԵՀ հրահանգով

**▼M2** Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 L 140 114 05.06.2009թ.  
թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգով

Փոփոխված՝

**▶A1** Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի L 236 33 23.09 2003թ.  
Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության,  
Լատվիայի Հանրապետության, Լիտվայի  
Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության,  
Մալթայի Հանրապետության, Լեհաստանի  
Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության և  
Սլովակիայի Հանրապետության անդամակցության  
պայմաններին ու այն Պայմանագրերում կատարվող  
փոփոխություններին վերաբերող ակտով, որոնցով  
հիմնադրվում է Եվրոպական միությունը:

Ուղղված՝

[▶C1](#) ՊՏ L 319, 23.11.2002թ., էջ 30 (01/80), ուղղումով

[▼B](#)

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2001 թվականի հոկտեմբերի 23-ի  
2001/80/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

**Խոշոր այրման կայաններից որոշակի աղտոտիչ նյութերի՝ մթնոլորտային օդ  
արտանետումների սահմանափակման մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,  
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը ([1](#)),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը ([2](#)),

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով ( 3 ) սահմանված ընթացակարգի համաձայն և  
ելնելով Համաձայնեցման կոմիտեի կողմից 2001 թվականի օգոստոսի 2-ին հաստատված  
համատեղ տեքստից,

Քանի որ

1) «Խոշոր այրման կայաններից որոշակի աղտոտիչ նյութերի՝ մթնոլորտային օդ  
արտանետումների սահմանափակման մասին» Խորհրդի 1988 թվականի նոյեմբերի 24-ի  
88/609/ԵՏՀ հրահանգը ([4](#)) մեծապես նպաստել է խոշոր այրման կայաններից  
մթնոլորտային արտանետումների կրճատմանն ու դրանց նկատմամբ հսկողությանը: Այն  
պետք է լրամշակվի՝ ելնելով հստակության նկատառումներից,

- 2) Շրջակա միջավայրի վերաբերյալ գործողությունների հինգերորդ ծրագրով (5) սահմանվում են այնպիսի նպատակներ, որոնց համաձայն, թթվեցնող որոշակի աղտոտող նյութերի, օրինակ՝ ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի օքսիդների (NO<sub>x</sub>), կրիտիկական բեռնվածքն ու սահմանաչափերը ոչ մի դեպքում չպետք է գերազանցեն սահմանված նորմաները, իսկ ինչ վերաբերում է օդի որակին, ապա բոլոր մարդիկ պետք է արդյունավետորեն պաշտպանված լինեն մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով առաջացող հայտնի վտանգներից,
- 3) բոլոր անդամ պետությունները ստորագրել են Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի 1979 թվականի «Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիայի՝ 1999 թվականի դեկտեմբերի 1-ի Գոթենբուրգի արձանագրությունը՝ ուղղված թթվեցման, ճահճացման և գետնամերձ օդոնի դեմ պայքարին, որը, ի թիվս այլոց, ներառում է ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդների արտանետումները կրճատելու պարտավորություններ,
- 4) Հանձնաժողովը հրապարակել է թթվեցման դեմ պայքարին ուղղված՝ Համայնքի ռազմավարության մասին հաղորդագրություն, որի մեջ 88/609/ԵՏՀ հրահանգի վերանայումը դիտարկվել է որպես այդ ռազմավարության անբաժանելի բաղադրիչ, որի երկարաժամկետ պլանով խնդիրը ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդների արտանետումների կրճատումն է՝ դրանց նստվածքները և կոնցենտրացիաները կրիտիկական բեռնվածքից ու մակարդակներից ցածր մակարդակի վրա բերելու նպատակով,
- 5) սուբսիդիարության սկզբունքի համաձայն՝ ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածում, խոշոր այրման կայաններից թթվեցնող արտանետումների կրճատումը չի կարող բավարար չափով ապահովվել առանձին-առանձին հանդես եկող անդամ պետությունների կողմից, իսկ չհամաձայնեցված գործողություններով հնարավոր չէ երաշխավորել ցանկալի նպատակի իրագործմանը հասնելը. հաշվի առնելով Համայնքի ամբողջ տարածքում թթվեցնող արտանետումների կրճատման անհրաժեշտությունը, ավելի արդյունավետ կլինի միջոցներ ձեռնարկել Համայնքի մակարդակով,

- 6) ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդների արտանետումները Համայնքում հիմնականում դուրս են գալիս գոյություն ունեցող խոշոր այրման կայաններից և, հետևաբար, անհրաժեշտ է կրճատել այդ արտանետումները: Այդ պատճառով անհրաժեշտ է համապատասխանեցնել անդամ պետություններում խոշոր այրման կայանների ոլորտի առանձնահատկությունների նկատմամբ կիրառվող մոտեցումը,
- 7) «Աղտոտման միասնական կանխարգելման և վերահսկողության մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգով ([\\_6\\_](#)) միասնական մոտեցում է նախատեսվում աղտոտման կանխարգելման և վերահսկողության նկատմամբ, որտեղ միասնականորեն հաշվի են առնվել կայանքի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ցուցանիշները. այդ հրահանգի շրջանակներում ներառված են 50 ՄՎտ նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանքները. այդ հրահանգի 15(3) հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովը յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ պետք է հրապարակի հիմնական արտանետումների և դրանց աղբյուրների կադաստրի տվյալները անդամ պետությունների կողմից ներկայացված տվյալների հիման վրա: Այդ հրահանգի 18-րդ հոդվածի համաձայն՝ Խորհուրդը, գործելով Հանձնաժողովի առաջարկության հիման վրա, Պայմանագրով սահմանված կարգով սահմանում է արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները, որոնց գծով Համայնքի կողմից գործողության անհրաժեշտություն է առաջացել, մասնավորապես, այդ հրահանգի 16-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության փոխանակման հիման վրա,
- 8) սույն Հրահանգով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը պետք է համարվի պարտադիր, սակայն ոչ բավարար պայման՝ 96/61/ԵՀ հրահանգի պահանջները բավարարելու համար, որոնք վերաբերում են գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների օգտագործմանը: Այդ համապատասխանությունը կարող է վերաբերել արտանետումների թույլատրելի ավելի խիստ նորմաների, այլ նյութերի արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների և այլ միջոցների կիրառմանն ու համապատասխան այլ պայմանների,
- 9) խոշոր այրման կայաններից արտանետումների հետևանքով առաջացող աղտոտման

նվազեցման տեխնոլոգիաների կիրառման փորձը ձեռք է բերվել 15 տարվա ընթացքում,

- 10) «Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիայի՝ ծանր մետաղներին վերաբերող արձանագրությամբ առաջարկվում է ընդունել ակտեր՝ ուղղված որոշակի կայանքներից ծանր մետաղների արտանետումների կրճատմանը: Հայտնի է, որ փոշոտվածությունը նվազեցնող սարքավորման միջոցով փոշու արտանետումների կրճատման օգտակար արդյունքները կնպաստեն մասնիկների տեսքով ծանր մետաղների արտանետումների պակասեցմանը,
- 11) էլեկտրաէներգիայի արտադրության կայանքները խոշոր այրման կայանների ոլորտի կարևոր մասն են կազմում,
- 12) «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 19-ի 96/92/ԵՀ հրահանգը ([7](#)) նախատեսված է, ի թիվս այլոց, ոլորտում նոր սուբյեկտների միջև արտադրական հզորությունը բաշխող ազդեցություն ունենալու համար,
- 13) Համայնքի նպատակը ածխաթթու գազի արտանետումները պակասեցնելն է: Տեխնիկատնտեսական հիմնավորվածության դեպքում ջերմային էներգիայի և էլեկտրաէներգիայի համակցված արտադրությունը արժեքավոր հնարավորություն է՝ վառելիքի օգտագործման ընդհանուր արդյունավետության բարձրացման համար,
- 14) էլեկտրաէներգիայի արտադրությունում բնական գազի օգտագործման ծավալների ավելացումն արդեն ընթացքի մեջ է և մեծ հավանականություն ունի շարունակվելու՝ հատկապես գազատուրբինների օգտագործման միջոցով,
- 15) հաշվի առնելով կենսազանգվածից էլեկտրաէներգիայի արտադրության ընդլայնումը, այս տեսակի վառելիքի համար արտանետումների թույլատրելի սահմանային հատուկ նորմաներն արդարացված են,
- 16) «Թափոնների կառավարման գծով Համայնքի ռազմավարության մասին» Խորհրդի 1997 թվականի փետրվարի 24-ի բանաձևով ([8](#)) ընդգծվում է թափոններից արժեքավոր նյութերի վերականգնումը խրախուսելու անհրաժեշտությունը և շեշտվում, որ

արտանետումների թույլատրելի սահմանային համապատասխան նորմաներ պետք է կիրառվեն աղբայրիչ կառուցվածքների շահագործման նկատմամբ՝ շրջակա միջավայրի բարձր մակարդակի պաշտպանությունն ապահովելու նպատակով,

- 17) խոշոր այրման կայաններից արտանետվող հիմնական աղտոտիչ նյութերի չափման տեխնոլոգիաներին ու սարքավորումներին վերաբերող բնագավառում փորձ է ձեռք բերվել. Ստանդարտացման եվրոպական կոմիտեն (ՍԵԿ) աշխատանքներ է նախաձեռնել՝ նպատակ ունենալով ապահովելու Համայնքի ներսում չափման համեմատելի արդյունքները և երաշխավորելու այս չափումների բարձր որակը,
- 18) անհրաժեշտություն կա խորացնելու խոշոր այրման կայաններից հիմնական աղտոտիչ նյութերի արտանետումներին վերաբերող գիտելիքները: Կայանքից եկող աղտոտվածության մակարդակի մասին լիարժեք պատկերացում ապահովելու համար անհրաժեշտ է, որ այդ տեղեկատվությունը կապված լինի նաև էներգիայի սպառման մասին գիտելիքների հետ,
- 19) սույն Հրահանգը չի հակասում այն վերջնաժամկետներին, որոնց ընթացքում անդամ պետությունները պետք է փոխատեղեն և իրականացնեն 88/609/ԵՏՀ հրահանգը,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

#### *Հոդված 1*

Սույն Հրահանգը կիրառվում է 50 ՄՎտ–ին հավասար կամ ավելի նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանների նկատմամբ՝ անկախ օգտագործվող վառելիքի տեսակից (պինդ, հեղուկ կամ գազային):

#### *Հոդված 2*

Սույն Հրահանգի նպատակով՝

- 1) «արտանետում» նշանակում է այրման կայանից նյութերի հեռացումը մթնոլորտային օդ,
- 2) «արտանետվող գազեր» նշանակում է պինդ, հեղուկ կամ գազային արտանետումներ պարունակող գազանման արտանետվածքներ. դրանց հոսքի ծավալային արագությունն արտահայտվում է ժամում խորանարդ մետր հաշվարկով ստանդարտ ջերմաստիճանային (273 Կ (Կելվին)) և ճնշման (101,3 կՊա) պայմաններում, այսուհետ՝ (նխմ/ժ),
- 3) «արտանետման թույլատրելի սահմանային նորմա» նշանակում է այրման կայանից արտանետվող գազերում պարունակվող նյութի թույլատրելի քանակ, որը տվյալ ժամանակահատվածի ընթացքում կարող է հեռացվել մթնոլորտային օդ. Այն հաշվարկվում է զանգվածի հաշվով՝ ըստ արտանետվող գազերի ծավալի, որն արտահայտվում է մգ/նխմ-ով, ընդունելով, որ թթվածնի պարունակությունն ըստ ծավալի արտանետվող գազերում կազմում է 3 տոկոս՝ հեղուկ և գազային վառելիքի դեպքում, 6 տոկոս՝ պինդ վառելիքի դեպքում, և 15 տոկոս՝ գազատուրբինների դեպքում,
- 4) «ծծմբազերծման գործակից» նշանակում է տվյալ ժամանակահատվածում այրման կայանի տարածքի մթնոլորտային օդ չարտանետվող ծծմբի քանակության հարաբերակցությունը այրման կայանի սարքավորանքներում լցվող և միևնույն ժամանակահատվածի ընթացքում օգտագործվող վառելիքում պարունակվող ծծմբի քանակության նկատմամբ,
- 5) «օպերատոր» ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը շահագործում է այրման կայանը, կամ որը դրա նկատմամբ ունի որոշիչ տնտեսական իշխանություն, կամ որին պատվիրակվել է այդ իշխանությունը,
- 6) «վառելիք» նշանակում է ցանկացած պինդ, հեղուկ կամ գազային այրվող նյութ, որն օգտագործվում է այրման կայանի գործարկման/աշխատեցման համար, բացառությամբ այն թափոնների, որոնք նախատեսված են «Քաղաքային նոր աղբայրիչ գործարանների կողմից մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 8-ի 89/369/ԵՏՀ հրահանգով ([9](#)), «Գոյություն ունեցող քաղաքային աղբայրիչ գործարանների կողմից մթնոլորտային օդի աղտոտումը նվազեցնելու մասին» Խորհրդի

1989 թվականի հունիսի 21-ի 89/429/ԵՏՀ հրահանգով ([10](#)), «Վտանգավոր թափոնների այրման մասին» Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 16-ի 94/67/ԵՀ հրահանգով ([11](#)) կամ այս հրահանգներից մեկը կամ մի քանիսը ուժը կորցրած ճանաչող կամ փոխարինող՝ Համայնքի հետագա ցանկացած ակտով,

- 7) «այրման կայան» նշանակում է ցանկացած տեխնիկական սարքավորանք, որի մեջ վառելիքն օքսիդացվում է՝ այդ եղանակով ստացված ջերմության օգտագործման նպատակով:

Սույն Հրահանգը կիրառվում է միայն էներգիայի արտադրության համար նախատեսված այրման կայանների նկատմամբ, բացառությամբ նրանց, որոնք այրման արգասիքն ուղղակիորեն օգտագործում են արտադրական պրոցեսում: Սույն Հրահանգը, մասնավորապես, չի կիրառվում հետևյալ այրման կայանների նկատմամբ՝

- ա) կայաններ, որտեղ այրման արգասիքներն օգտագործվում են ուղղակիորեն տաքացման, չորացման կամ օբյեկտների ու նյութերի որևէ այլ ձևով մշակման համար, օրինակ՝ տաքացնող վառարանները, ջերմային մշակման վառարանները,
- բ) հետայրման կայան, այսինքն՝ ցանկացած տեխնիկական կայանք, որը նախատեսված է այրումից արտանետված գազերի մաքրման համար, որը չի շահագործվում որպես առանձին այրման կայան,
- գ) կառուցվածքներ՝ կատալիտիկ կրեկինգի կատալիզատորների ռեգեներացիայի համար,
- դ) կառուցվածքներ՝ ծծմբաջրածինը ծծումբի վերածելու համար,
- ե) քիմիական արդյունաբերության մեջ օգտագործվող ռեակտորները,
- զ) կոքսի վառարանները,
- է) դոմնային օդատաքացուցիչները;
- ը) ցանկացած տեխնիկական սարքավորանք, որն օգտագործվում է տրանսպորտային միջոցի, նավի կամ օդանավի քարշի համար,



թ) ծովային հորատող հարթակների վրա օգտագործվող գազատուրբիններ,

ժ) մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը լիցենզավորված գազատուրբիններ կամ գազատուրբիններ, որոնք, ըստ իրավասու մարմնի, պարտադիր կերպով ենթակա են նման լիցենզիա ստանալու մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, պայմանով՝ որ կայանի շահագործումը մեկնարկի 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ՝ առանց հակասելու 7(1) հոդվածին և VIII(Ա) և (Բ) հավելվածին:

Սույն Հրահանգը չի կիրառվում դիզելով, բենզինով և գազով շահագործվող կայանների նկատմամբ:

Եթե երկու կամ ավելի կայաններ տեղակայված են այնպես, որ հաշվի առնելով տեխնիկական և տնտեսական գործոնները, դրանցից արտանետվող գազերը՝ ըստ իրավասու մարմինների, հեռացվեն ընդհանուր ծխատար խողովակով, ապա նման կայաններով ձևավորված համակցությունը դիտվում է որպես մեկ օբյեկտ,

- 8) «բազմավառելիքային ագրեգատ» նշանակում է ցանկացած այրման կայան, որը կարող է համաժամանակյա կամ այլընտրանքային կարգով շահագործվել երկու կամ ավելի տեսակի վառելիքով,
- 9) «նոր կայան» նշանակում է ցանկացած այրման կայան, որի համար շինարարության սկզբնական լիցենզիան, կամ նման կարգի բացակայության դեպքում՝ սկզբնական շահագործման լիցենզիան, տրվել է 1987 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո,
- 10) «գոյություն ունեցող կայան» նշանակում է ցանկացած այրման կայան, որի համար շինարարության սկզբնական լիցենզիան, կամ նման կարգի բացակայության դեպքում՝ սկզբնական շահագործման լիցենզիան տրվել է 1987 թվականի հուլիսի 1-ից առաջ,
- 11) «կենսազանգված» նշանակում է գյուղատնտեսությունից կամ անտառտնտեսությունից գոյացած բուսանյութի ամբողջությունից կամ դրա մի մասից բաղկացած արտադրանք, որը կարող է օգտագործվել որպես վառելիք՝ դրանց էներգատարությունը վերականգնելու նպատակով, իսկ որպես վառելիք օգտագործվում են հետևյալ թափոնները՝

- ա) գյուղատնտեսությունից և անտառտնտեսությունից գոյացող բուսական թափոններ,
- բ) սննդարդյունաբերությունից գոյացող բուսական թափոններ, եթե արտադրվող ջերմությունը վերաօգտագործվում է,
- գ) սկզբնական հումքից ստացվող ցեյուլոզայից և ցեյուլոզայի հիմքով թղթի արտադրությունից գոյացող թելքային բուսանյութի թափոններ, եթե դրանք այրվում են արտադրության վայրում, իսկ ստացվող ջերմությունը վերաօգտագործվում է,
- դ) խցանի թափոններ,
- ե) փայտի թափոններ, բացառությամբ այն փայտի թափոնների, որոնք փայտի համար նախատեսված կոնսերվանտներով կամ պատվածքով մշակելու արդյունքում կարող են պարունակել հալոգենացված օրգանական միացություններ կամ ծանր մետաղներ, և որոնք մասնավորապես պարունակում են շինարարության հետևանքով առաջացած փայտի թափոններ և քանդումից գոյացած թափոններ ,

12) «գազատուրբին» նշանակում է ջերմային էներգիան մեխանիկական աշխատանքի վերածող ցանկացած պտտվող մեքենա, որը բաղկացած է գլխավորապես կոմպրեսորից, այրման ագրեգատից, որում վառելիքն օքսիդացվում է՝ բանվորական հեղուկը տաքացնելու նպատակով, և տուրբինից:

13) «հեռավոր տարածքներ» նշանակում է Ֆրանսիայի համար՝ արտերկրյա ֆրանսիական գերատեսչությունները, Պորտուգալիայի համար՝ Ազորյան կղզիները և Մադեյրա կղզին, ու Իսպանիայի համար՝ Կանարյան կղզիները:

### *Հոդված 3*

1. Անդամ պետությունները 1990 թվականի հուլիսի 1-ից ոչ ուշ պետք է կազմեն համապատասխան ծրագրեր՝ գոյություն ունեցող կայաններից տարեկան կտրվածքով արտանետումների ընդհանուր ծավալն աստիճանաբար կրճատելու համար: Այդ ծրագրերով պետք է սահմանվեն ժամանակացույցները և իրականացման կարգը:

2. 1-ին պարբերության մեջ նշված ծրագրերին համապատասխան՝ անդամ պետությունները պետք է շարունակեն պահպանել արտանետումների առավելագույն սահմանաչափերը և նվազեցման տոկոսային չափերը, որոնք ծծմբի դիօքսիդի համար սահմանված են I հավելվածի 1-6-րդ սյունակներում, իսկ ազոտի օքսիդների համար՝ II հավելվածի 1-4-րդ սյունակներում, այդ հավելվածներում նշված ժամկետներում, մինչև 4-րդ հոդվածի դրույթների կիրարկումը, որոնք կիրառվում են գոյություն ունեցող կայանների նկատմամբ:

3. Երբ ծրագրերն իրականացվեն, անդամ պետությունները պետք է նաև որոշեն արտանետումների տարեկան կտրվածքով ընդհանուր ծավալը՝ VIII(Գ) հավելվածի համաձայն: 4. Եթե էներգիայի պահանջարկի կամ որոշակի վառելիքի մատչելիության կամ գեներատորային որոշակի կայանքների էական և անկանխատեսելի փոփոխությունը լուրջ տեխնիկական դժվարություններ է առաջացնում անդամ պետության կողմից՝ 1-ին պարբերության համաձայն կազմված իր ծրագրի իրականացման հարցում, ապա Հանձնաժողովը, տվյալ անդամ պետության խնդրանքով ու հաշվի առնելով խնդրանքի պայմանները, որոշում է կայացնում տվյալ անդամ պետության համար արտանետումների առավելագույն սահմանաչափը և (կամ) I ու II հավելվածներում սահմանված ժամկետները փոփոխելու մասին և իր որոշման մասին տեղեկացնում է Խորհրդին ու անդամ պետություններին: Ցանկացած անդամ պետություն կարող է երեք ամսվա ընթացքում Հանձնաժողովի որոշումն ուղարկել Խորհուրդ: Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, կարող է երեք ամսվա ընթացքում այլ որոշում կայացնել :

#### *Հոդված 4*

1. Առանց հակասելու 17-րդ հոդվածին՝ անդամ պետությունները պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ շինարարության կամ նման կարգ չլինելու դեպքում՝ նոր այն կայանների շահագործման համար տրվող բոլոր լիցենզիաներում, որոնք իրավասու մարմնի կարծիքով մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը ենթակա են լիցենզիա ստանալու, պայմանով՝ որ կայանը գործարկվի մինչև 2003 թվականի նոյեմբերի 27-ը, պայմաններ պարունակվեն III-VII հավելվածների Ա մասում սահմանված՝ ծծմբի դիօքսիդին,

ազոտի օքսիդներին և փոշուն վերաբերող արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունն ապահովելու մասին:

2. Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ 1-ին պարբերության մեջ չնշված շինարարության կամ նման կարգ չիներելու դեպքում, նոր կայանների շահագործման համար տրվող բոլոր լիցենզիաները պարունակեն այնպիսի պայմաններ, որոնք վերաբերում են ծծմբի դիօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու համար III-VII հավելվածների Բ մասով արտանետումների սահմանված թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությանը:

3. Առանց հակասելու 96/61/ԵՀ հրահանգին և «Մթնոլորտային օդի որակի գնահատման ու կառավարման մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 27-ի 96/62/ԵՀ հրահանգին ([12](#))՝ անդամ պետությունները պետք է ամենաուշը մինչև 2008 թվականի հունվարի 1-ը ապահովեն արտանետումների կրճատման զգալի արդյունքներ՝

ա) ձեռնարկելով պատշաճ միջոցներ, ապահովելու համար, որ գոյություն ունեցող կայանների շահագործման համար տրվող բոլոր լիցենզիաները պարունակեն այնպիսի պայմաններ, որոնք վերաբերում են 1-ին պարբերության մեջ նշված նոր կայանների համար սահմանված՝ արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությանը,

բ) ապահովելով, որ 6-րդ պարբերության մեջ նշված՝ արտանետումների կրճատմանն ուղղված ազգային ծրագիրը տարածվի գոյություն ունեցող կայանների վրա,

և, հնարավորության դեպքում, կիրառելով 5-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածները:

4. Առանց հակասելու 96/61/ԵՀ և 96/62/ԵՀ հրահանգներին՝ գոյություն ունեցող կայանները կարող են ազատվել 3-րդ պարբերության մեջ նշված՝ արտանետումների թույլատրելի սահմանային նորմաներին համապատասխանելու և արտանետումների կրճատմանն ուղղված ազգային ծրագրում ընդգրկվելու պահանջից հետևյալ պայմաններով՝

ա) գոյություն ունեցող կայանը շահագործողը՝ ամենաուշը մինչև 2004 թվականի հունիսի 30-ը, իրավասու մարմին ներկայացրած գրավոր հայտարարությամբ պարտավորություն

է ստանձնում 2008 թվականի հունվարի 1-ից սկսած մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը կայանը չշահագործել 20 000 աշխատանքային ժամից ավելի,

բ) օպերատորը պարտավոր է ամեն տարի իրավասու մարմին հաշվետվություն ներկայացնել կայանի շահագործման մնացած ժամկետի՝ օգտագործած և չօգտագործած թույլատրվող ժամանակի մասին:

5. Անդամ պետությունները կարող են պահանջել արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանության և իրականացման ժամկետների ավելի խիստ պայմաններ, քան նախատեսված են 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում ու 10-րդ հոդվածում: Նրանք կարող են ներառել նաև այլ աղտոտիչներ և կարող են լրացուցիչ կարգով պարտադրել այլ պահանջների սահմանումը կամ կայանի համապատասխանեցումը տեխնիկական առաջընթացին:

6. Անդամ պետությունները կարող են, առանց խախտելու սույն Հրահանգն ու 96/61/ԵՀ հրահանգը և հաշվի առնելով ծախսերն ու եկամուտները, ինչպես նաև «Մթնոլորտն աղտոտող որոշակի նյութերի արտանետումների ազգային առավելագույն սահմանաչափերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/81/ԵՀ հրահանգով ([13](#)) և 96/62/ԵՀ հրահանգով նախատեսված իրենց պարտականությունները, գոյություն ունեցող կայանների համար սահմանեն ու իրականացնեն արտանետումների կրճատմանն ուղղված ազգային ծրագիր, հաշվի առնելով, ի թիվս այլոց, I և II հավելվածներում սահմանված՝ առավելագույն սահմանաչափերի հետ համապատասխանությունը:

Արտանետումների կրճատմանն ուղղված ազգային ծրագրով պետք է կրճատվեն ազոտի օքսիդների (NOx), ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) և փոշու արտանետումները գոյություն ունեցող կայաններից, հասցնելով դրանք այն մակարդակներին, որոնք կապահովվեին գոյություն ունեցող և գործող կայանների նկատմամբ 2000 թվականի ընթացքում 3-րդ պարբերության մեջ նշված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները կիրառելու միջոցով (ներառյալ գոյություն ունեցող այն կայանները, որոնք իրավասու մարմինների հավանությամբ 2000 թվականին ենթարկվել են վերանորոգման աշխատանքների, արտանետումների՝ ազգային օրենսդրությամբ պահանջվող կրճատմանը

համապատասխանելու նպատակով) հիմնվելով յուրաքանչյուր կայանի տարեկան կտրվածքով շահագործման ժամանակի, օգտագործված վառելիքի և ջերմային հզորության վրա, որպես հիմք ընդունելով շահագործման վերջին հինգ տարվա կտրվածքով միջին արժեքները՝ մինչև և ներառյալ 2000 թվականը:

Արտանետումների կրճատմանն ուղղված ազգային ծրագրում ընդգրկված կայանի փակումը ծրագրում ընդգրկված մնացած կայաններից չպետք է հանգեցնի արտանետումների ընդհանուր ծավալի ավելացմանը:

Արտանետումների կրճատմանն ուղղված ազգային ծրագրով որևէ կայան ոչ մի դեպքում չպետք է ազատվի Համայնքի համապատասխան օրենսդրությամբ, այդ թվում՝ ի թիվս այլոց, 96/61/ԵՀ հրահանգով սահմանված դրույթների պահանջներից:

Արտանետումների կրճատմանն ուղղված ազգային ծրագրերի նկատմամբ կիրառվում են հետևյալ պայմանները՝

- ա) ծրագրում պետք է ընդգրկվեն խնդիրները և դրանց հարակից նախանշված նպատակները, այդ խնդիրներին ու նախանշված նպատակներին հասնելու միջոցները և ժամանակացույցն ու դիտանցման մեխանիզմը,
- բ) անդամ պետությունները արտանետումների կրճատմանն ուղղված իրենց ազգային ծրագրի մասին 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ տեղեկացնում են Հանձնաժողովին,
- գ) «բ» կետում նշված տեղեկացումից հետո վեց ամսվա ընթացքում Հանձնաժողովը որոշում է ծրագրի՝ սույն պարբերությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու հարցը: Եթե Հանձնաժողովը որոշում է, որ սա այլ դեպք է, ապա նա դրա մասին տեղեկացնում է անդամ պետությանը, և հաջորդ երեք ամսվա ընթացքում անդամ պետությունը տեղեկացնում է ցանկացած միջոցի մասին, որ նա ձեռնարկել է՝ սույն պարբերության պահանջները բավարարելու համար,
- դ) Հանձնաժողովը 2002 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ մշակում է ուղեցույցներ՝ իրենց ծրագրերը պատրաստելու հարցում անդամ պետություններին օժանդակելու նպատակով:

7. Հաշվի առնելով մարդու առողջության պաշտպանությանը և 96/62/ԵՀ հրահանգի համաձայն՝ Համայնքի՝ թթվայնացման և օդի որակի մասով բնապահպանական նպատակներին հասնելու ուղղությամբ առաջընթացը, Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ 2004 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ զեկույց է ներկայացնում, որով գնահատվում է՝

ա) հետագա միջոցների կիրառման անհրաժեշտությունը,

բ) խոշոր այրման կայաններից արտանետված ծանր մետաղների քանակները,

գ) անդամ պետություններում այրման կայանների ոլորտում արտանետումների հետագա կրճատումների գծով ծախսերի արդյունավետությունը և ծախսերն ու եկամուտները՝ համեմատած այլ ոլորտների հետ,

դ) արտանետումների այդօրինակ կրճատումների տեխնիկատնտեսական հիմնավորվածությունը,

ե) խոշոր այրման կայանների ոլորտի համար սահմանված ստանդարտների, այդ թվում՝ տեղական պինդ վառելիքի համար սահմանված դրույթների, և էներգիայի շուկայում մրցակցության հետ կապված իրավիճակի ազդեցությունները,

զ) անդամ պետությունների ներկայացրած՝ արտանետումների կրճատմանն ուղղված ցանկացած ծրագիր՝ 6-րդ պարբերության համաձայն:

Հանձնաժողովն իր զեկույցում պետք է հնարավոր վերջնաժամկետների կամ VI Ա հավելվածի 2-րդ ծանոթագրության մեջ ներառված շեղման համար նախատեսվող ավելի ցածր արտանետումների թույլատրելի սահմանային նորմաներին վերաբերող համապատասխան առաջարկ ներառի:

8. 7-րդ պարբերության մեջ նշված զեկույցին հարկ եղած դեպքում պետք է կցվեն նաև համապատասխան առաջարկներ՝ հաշվի առնելով 96/61/ԵՀ հրահանգը:

Շեղում կատարելով III հավելվածից՝

1) 400 ՄՎտ կամ ավելի նոմինալ ջերմային հզորություն ունեցող կայանները, որոնք տարեկան կտրվածքով չեն շահագործվում ստորև նշված ժամաքանակից ավելի (հինգ տարվա համար հաշվարկված սահող միջինը)՝

- մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 2 000 ժամ,
- 2016 թվականի հունվարի 1-ից հետո՝ 1 500 ժամ,

պետք է ծծմբի դիօքսիդի արտանետումների համար պահպանեն թույլատրելի սահմանային 800 մգ/նխմ նորման:

Սույն դրույթը չի կիրառվում նոր կայանների նկատմամբ, որոնց համար լիցենզիան տրվել է 4(2) հոդվածի համաձայն:

2) Մինչև 1999 թվականի դեկտեմբերի 31-ը Իսպանիայի Թագավորությունը կարող է թույլատրել 500 ՄՎտ կամ ավելի նոմինալ ջերմային հզորություն ունեցող՝ տեղական կամ ներկրվող պինդ վառելիք վառող նոր կայանների շահագործումը, որոնք գործարկվել են նախքան 2005 թվականի ավարտը և համապատասխանում են հետևյալ պահանջներին.

ա) ներկրված պինդ վառելիքի դեպքում՝ ծծմբի դիօքսիդի արտանետման թույլատրելի սահմանային նորման հավասար է 800 մգ/նխմ,

բ) տեղական պինդ վառելիքի դեպքում ծծմբազերծման գործակիցն առնվազն 60 տոկոս է՝

պայմանով, որ այն կայանների թույլատրված հզորության ընդհանուր ծավալը, որոնց նկատմամբ կիրառվում է սույն շեղումը, չգերազանցի՝

- 2 000 ՄՎտ էլեկտրաէներգիան՝ տեղական ծագման վառելիք օգտագործող կայանների դեպքում,
- ներկրված պինդ վառելիք օգտագործող կայանների դեպքում՝ կամ 7 500 կամ պինդ վառելիքներ օգտագործող բոլոր կայանների նոր ամբողջ հզորության 50 տոկոսը,



որոնք թույլատրվել են մինչև 1999 թվականի դեկտեմբերի 31-ը, կիրառելով այն մեծությունը, որն ամենացածրն է:

#### Հոդված 6

4(2) հոդվածի համաձայն լիցենզիա ստացած նոր կայանների կամ 10-րդ հոդվածում նշված կայանների դեպքում անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ուսումնասիրվի ջերմային էներգիայի և էլեկտրաէներգիայի համակցված արտադրություն նախատեսելու տեխնիկատնտեսական հիմնավորվածությունը: Եթե տեխնիկատնտեսական հիմնավորվածությունը հաստատվում է, հաշվի առնելով շուկայի և բաշխման հետ կապված հանգամանքները, ապա կայանքները նախագծվում են համապատասխան կերպով:

#### Հոդված 7

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 4-րդ հոդվածում նշված լիցենզիաներում կամ թույլտվություններում նախատեսվեն այնպիսի ընթացակարգեր, որոնք վերաբերում են մաքրման սարքավորումների անսարքություններին կամ խափանումներին: Խափանման դեպքում իրավասու մարմինը պետք է, մասնավորապես, օպերատորից պահանջի, որ վերջինս կրճատի կամ դադարեցնի շահագործումը, եթե բնականոն շահագործումը հնարավոր չէ ապահովել 24 ժամվա ընթացքում, կամ կայանը շահագործել՝ օգտագործելով քիչ աղտոտող վառելիք: Բոլոր դեպքերում իրավասու մարմինն ծանուցում են 48 ժամվա ընթացքում: Ոչ մի պարագայում առանց մաքրման շահագործման՝ հանրագումարային տևողությունը տասներկուամսյա ժամանակահատվածում չպետք է գերազանցի 120 ժամը: Իրավասու մարմինը կարող է բացառություններ թույլատրել վերը նշված 24 ժամվա և 120 ժամվա մասով, եթե այն կարծում է, որ՝

- ա) էլեկտրաէներգիայի մատակարարումը պահպանելու գերակա անհրաժեշտություն կա կամ
- բ) խափանում ունեցող կայանը սահմանափակ ժամկետում կփոխարինվի մեկ այլ կայանով, ինչը կհանգեցնի արտանետումների ընդհանուր ծավալի ավելացմանը:

2. Իրավասու մարմինը կարող է թույլատրել առավելագույնը վեց ամսով կասեցնելու 4-րդ հոդվածով նախատեսված՝ ծծմբի դիօքսիդի համար սահմանված՝ արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանելու պարտավորությունն այն կայանի դեպքում, որն այդ նպատակով արդեն օգտագործում է ծծմբի ցածր պարունակությամբ վառելիք, այն դեպքերում, երբ օպերատորն ի վիճակի չէ բավարարել այդ սահմանային նորմաները՝ պայմանավորված ծծմբի ցածր պարունակությամբ վառելիքի մատակարարման ընդհատումներով, որոնք առաջանում են դրա լուրջ պակասի հետևանքով: Հանձնաժողովն անհապաղ տեղեկացվում է նման դեպքերի մասին:

3. Իրավասու մարմինը կարող է նաև թույլատրել շեղում կատարել 4-րդ հոդվածով նախատեսված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաներին համապատասխանելու պարտավորությունից այն դեպքերում, երբ կայանը, որը սովորաբար օգտագործում է միայն գազային վառելիք և որը, հակառակ դեպքում, անհրաժեշտ կլինի համալրել գազի մաքրման սարքավորանքով, գազի մատակարարման հանկարծակի ընդհատումներով պայմանավորված՝ պետք է անցնի բացառապես այլ վառելիքների օգտագործմանը 10 օրը չգերազանցող ժամկետով, բացառությամբ այն դեպքերի, երբ գերակա անհրաժեշտություն կա պահպանելու էլեկտրաէներգիայի մատակարարումները: Իրավասու մարմինը պետք է անմիջապես տեղեկացվի նման առանձնահատուկ դեպքերի մասին, երբ դրանք ի հայտ են գալիս: Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին անհապաղ տեղեկացնեն սույն պարբերության մեջ նշված դեպքի մասին:

### *Հոդված 8*

1. Երկու կամ ավելի տեսակի վառելիք օգտագործելու հնարավորություն տվող բազմավառելիքային ագրեգատ ունեցող կայանի դեպքում, 4(1) կամ 4(2) հոդվածներում նշված լիցենզիան տրամադրելիս, ինչպես նաև 4(3) հոդվածով կամ 10-րդ հոդվածով նախատեսված նման կայանների դեպքում, իրավասու մարմինն արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները սահմանում է հետևյալ կերպ՝

- ա) առաջին՝ վերցվում է յուրաքանչյուր վառելիքի և աղտոտող նյութի համար սահմանված արտանետման թույլատրելի սահմանային նորման՝ III և VII հավելվածներում ներկայացված այրման կայանի նոմինալ ջերմային հզորությանը համապատասխան,
- բ) երկրորդ՝ որոշվում են վառելիքով կշռված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները, որոնք ստացվում են նախորդ կետում նշված՝ արտանետման յուրաքանչյուր սահմանային նորման համապատասխան վառելիքով արտադրվող նոմինալ ջերմային հզորությամբ բազմապատկելով և արտադրյալը բոլոր վառելիքներով արտադրվող նոմինալ ջերմային հզորությունների գումարի վրա բաժանելով,
- գ) երրորդ՝ հաշվարկվում է վառելիքով կշռված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հանրագումարը:

2. Բազմավառելիքային ագրեգատների դեպքում, որոնք սեփական օգտագործման համար առանձին կամ այլ վառելիքների հետ միասին օգտագործում են նավթամշակումից ստացված թորման և կերպափոխման մնացորդները, կիրառվում են արտանետումների թույլատրելի սահմանային ամենաբարձր նորմայով վառելիքի (որոշիչ վառելիք) համար սահմանված դրույթները, չնայած վերը նշված 1-ին պարբերությանը, եթե այրման կայանի շահագործման ընթացքում բոլոր վառելիքների ջերմային հզորության ընդհանուր ծավալում այդ վառելիքից ստացված մասնաբաժինը կազմում է առնվազն 50 տոկոս: Եթե որոշիչ վառելիքի մասնաբաժինը 50 տոկոսից պակաս է, ապա արտանետման թույլատրելի սահմանային նորման որոշվում է բոլոր վառելիքներից ստացվող ջերմային հզորության հանրագումարի նկատմամբ առանձին վառելիքներից ստացվող ջերմային հզորության հարաբերակցության համամասնության հաշվարկմամբ հետևյալ կերպ՝

- ա) առաջին՝ վերցվում է յուրաքանչյուր վառելիքի և աղտոտիչի համար սահմանված՝ արտանետման թույլատրելի սահմանային նորման՝ III և VII հավելվածներում ներկայացված այրման կայանի նոմինալ ջերմային հզորությանը համապատասխան,
- բ) երկրորդ՝ որոշվում է որոշիչ վառելիքի արտանետման սահմանային արժեքը (III-VII հավելվածների համաձայն արտանետումների ամենաբարձր թույլատրելի սահմանային նորմա ունեցող վառելիքը, իսկ արտանետման միևնույն թույլատրելի սահմանային

նորմա ունեցող երկու վառելիքի դեպքում՝ ամենաբարձր ջերմային հզորություն ունեցող վառելիքը). այդ արժեքը ստացվում է III–VII հավելվածներում այդ վառելիքի համար սահմանված՝ արտանետման թույլատրելի սահմանային նորման բազմապատկելով «2» գործակցով, այնուհետև ստացված արդյունքից հանվում է արտանետման ամենացածր թույլատրելի սահմանային նորմա ունեցող վառելիքի արտանետման սահմանային նորման,

գ) երրորդ՝ որոշվում են վառելիքով կշռված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները, որոնք ստացվում են՝ վառելիքի արտանետման սահմանային արժեքը բազմապատկելով որոշիչ վառելիքով արտադրվող նոմինալ ջերմային հզորությամբ, իսկ այլ առանձին արտանետումների սահմանային նորմաները՝ յուրաքանչյուր վառելիքով արտադրվող ջերմային հզորությամբ, և արտադրյալը բոլոր վառելիքներով արտադրվող նոմինալ ջերմային հզորությունների գումարի վրա բաժանելով,

դ) չորրորդ՝ հաշվարկվում է վառելիքով կշռված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հանրագումարը:

3. Որպես 2-րդ պարբերության այլընտրանքային տարբերակ՝ ծծմբի դիօքսիդի համար կիրառվում են հետևյալ արտանետումների թույլատրելի սահմանային միջին նորմաները (անկախ օգտագործվող վառելիքի համադրությունից)՝

ա) 4(1) և (3) հոդվածում նշված կայանների համար՝ 1 000 մգ/նխմ՝ միջինացված գործարանի ներսում առկա բոլոր կայանների հաշվով,

բ) 4(2) հոդվածում նշված նոր կայանների համար՝ 600 մգ/նխմ՝ միջինացված գործարանի ներսում առկա բոլոր նման կայանների հաշվով՝ բացառությամբ գազատուրբինների:

Իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ սույն դրույթի կիրառությունը չհանգեցնի գոյություն ունեցող կայաններից արտանետումների ծավալի ավելացմանը:

4. Երկու կամ ավելի տեսակի վառելիք օգտագործելու հնարավորություն տվող բազմավառելիքային ագրեգատ ունեցող կայանի դեպքում, 4(1) կամ 4(2) հոդվածներում նշված լիցենզիան տրամադրելիս, ինչպես նաև 4(3) հոդվածով կամ 10-րդ հոդվածով նախատեսված նման կայանների դեպքում, կիրառվում են յուրաքանչյուր առանձին

վառելիքին համապատասխանող՝ III–VII հավելվածներում սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

### *Հոդված 9*

Այրման կայաններից արտանետվող գազերը հեռացվում են կառավարվող ռեժիմով՝ ծխատարի միջոցով: 4–րդ հոդվածում նշված լիցենզիայում և 10–րդ հոդվածով նախատեսված՝ այրման կայանների համար տրվող լիցենզիայում պետք է սահմանվեն արտանետումների հեռացման պայմանները: Մասնավորապես, իրավասու մարմինը պետք է ապահովի, որ ծխատարի երկարությունը հաշվարկվի այնպես, որ ապահովվի առողջապահական և բնապահպանական անվտանգությունը:

### ▼M2

### *Հոդված 9ա*

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 300 մեգավատ կամ ավելի նոմինալ էլեկտրական հզորություն ունեցող այն բոլոր այրման կայանների օպերատորները, որոնց համար շինարարության սկզբնական լիցենզիան կամ, նման կարգի բացակայության դեպքում սկզբնական շահագործման լիցենզիան, տրվել է «Ածխաթթու գազի ստորգետնյա պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն, ապահովեն, որ բավարարվեն հետևյալ պայմանները.

- առկա լինեն պահեստավորման համապատասխան կառուցվածքներ,
- տրանսպորտային միջոցներն ունենան տեխնիկատնտեսական հիմնավորվածություն,
- ածխաթթու գազի հավաքման համար ձևափոխություն անելը տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված լինի:

2. Եթե բավարարվում են 1–ին պարբերությամբ նախատեսվող պայմանները, ապա իրավասու մարմինն ապահովում է, որ կառուցվածքի տեղանքում հարմար տեղ առանձնացվի ածխաթթու գազի հավաքման և սեղմման համար: Իրավասու մարմինը որոշում է պայմանների հետ համապատասխանությունը 1–ին պարբերությունում նշված

գնահատման և առկա այլ տվյալների հիման վրա, հատկապես շրջակա միջավայրի ու մարդու առողջության պաշտպանության մասով:

[▼B](#)

#### *Հոդված 10*

Եթե այրման կայանի հզորությունն ավելացվում է առնվազն 50 ՄՎտ-ով, ապա կայանի նոր մասի նկատմամբ կիրառվում են III–VII հավելվածների Բ մասում սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները և ամրագրվում ամբողջ կայանի ջերմային հզորության նկատմամբ: Սույն դրույթը չի կիրառվում 8(2) և (3) հոդվածում նշված դեպքերում:

Եթե այրման կայանի օպերատորը նախատեսում է փոփոխություններ անել 96/61/ԵՀ հրահանգի 2(10)(բ) հոդվածի և 12(2) հոդվածի համաձայն, ապա կիրառվում են ծծմբի դիօքսիդի, ազոտի օքսիդների փոշու համար III–VII հավելվածների Բ մասում սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

#### *Հոդված 11*

Այրման կայանների կառուցման դեպքում, որոնք հնարավոր է, որ էական ազդեցություն ունենան մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ համապատասխան բոլոր տեղեկությունները տրամադրվեն, իսկ շինարարությունն իրականացվի «Շրջակա միջավայրի վրա պետական և մասնավոր որոշակի նախագծերի ազդեցությունների գնահատման մասին» Խորհրդի 1985 թվականի հունիսի 27–ի 85/337/ԵՏՀ հրահանգին ([15](#)) համապատասխան:

#### *Հոդված 12*

Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ VIII(Ա) հավելվածի համաձայն դիտանցում իրականացվի սույն Հրահանգով նախատեսված այրման կայաններից արտանետումների, ինչպես նաև սույն Հրահանգի

կատարման համար անհրաժեշտ բոլոր այլ նորմաների նկատմամբ: Անդամ պետությունները կարող են պահանջել, որ այդ դիտանցումն իրականացվի օպերատորի միջոցների հաշվին:

### *Հոդված 13*

Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ օպերատորը հիմնավորված ժամկետում իրավասու մարմիններին տեղեկացնի սույն Հրահանգի հետ համապատասխանության ապահովման նպատակով իրականացվող մշտական չափումների, չափիչ սարքերի ստուգման, առանձին չափումների և այլ չափումների մասին:

### *Հոդված 14*

1. Մշտական չափումների դեպքում III–VII հավելվածների Ա մասում սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը համարվում է ապահովված, եթե օրացուցային տարում շահագործման ժամերի կտրվածքով գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ՝

ա) օրացուցային ամսվա կտրվածքով միջին արժեքներից ոչ մեկը չի գերազանցում արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները և

բ) հետևյալ դեպքերում՝

i) ծծմբի դիօքսիդ և փոշի՝ 48 ժամվա կտրվածքով բոլոր միջին արժեքների 97 տոկոսը չի գերազանցում արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները,

ii) ազոտի օքսիդներ՝ 48 ժամվա կտրվածքով բոլոր միջին արժեքների 95 տոկոսը չի գերազանցում արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

7–րդ հոդվածում նշված ժամկետները, ինչպես նաև գործարկման և պարապուրդի ժամանակահատվածները հաշվի չեն առնվում:

2. Այն դեպքերում, երբ գնահատման համար պահանջվում են միայն պարբերական չափումներ կամ այլ համապատասխան ընթացակարգեր, III–VII հավելվածներում սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը համարվում է ապահովված, եթե չափումների յուրաքանչյուր

սերիայի կամ իրավասու մարմինների կողմից սահմանված նորմերի համաձայն մշակված և որոշված այլ ընթացակարգերի արդյունքները չեն գերազանցում արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

► C1

3. 5(2) հոդվածում նշված դեպքերում ծծմբազերծման գործակցի հետ համապատասխանությունը համարվում է ապահովված, եթե VIII հավելվածի Ա.3 կետի համաձայն իրականացված չափումները ցույց են տալիս, որ օրացուցային ամսվա կտրվածքով արտանետումների սահմանային թույլատրելի բոլոր միջին արժեքներով կամ ընթացիկ ամսվա կտրվածքով միջին արժեքներով ապահովվել են ծծմբազերծման պահանջվող գործակիցները:

7-րդ հոդվածում նշված ժամկետները, ինչպես նաև գործարկման և պարապուրդի ժամանակահատվածները հաշվի չեն առնվում:

4. Նոր կայանների դեպքում, որոնց լիցենզիաները տրվել են 4(2) հոդվածի համաձայն, արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը օրացուցային տարվա ընթացքում շահագործման ժամերի կտրվածքով համարվում է ապահովված, եթե՝

ա) օրական կտրվածքով վալիդացված միջին արժեքը գերազանցում է III–VII հավելվածների Բ մասում սահմանված համապատասխան թվերը, և

բ) օրական կտրվածքով վալիդացված բոլոր միջին արժեքների 95 տոկոսը տարվա ընթացքում չեն գերազանցում III–VII հավելվածների Բ մասում սահմանված համապատասխան թվերի 200 տոկոսը:

«Վալիդացված միջին արժեքները» սահմանվում են VIII հավելվածի Ա.6 կետում սահմանված կարգով:

7-րդ հոդվածում նշված ժամկետները, ինչպես նաև գործարկման և պարապուրդի ժամանակահատվածները հաշվի չեն առնվում:



## Հոդված 15

1. Անդամ պետությունները պետք է 1990 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ Հանձնաժողովին տեղեկացնեն 3(1) հոդվածի համաձայն մշակված ծրագրերի մասին:

Գոյություն ունեցող կայաններից արտանետումների կրճատման տարբեր փուլերի ավարտից հետո ամենաուշը մեկ տարում անդամ պետությունները ծրագրերի իրականացման արդյունքների վերաբերյալ Հանձնաժողով ամփոփ զեկույց են ուղարկում:

Յուրաքանչյուր փուլի ընթացքում պահանջվում է նաև միջանկյալ զեկույց:

2. 1--ին պարբերության մեջ նշված զեկույցը պետք է ընդհանուր տեղեկություններ պարունակի հետևյալի մասին՝

ա) սույն Հրահանգով նախատեսված բոլոր այրման կայանները,

բ) ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդների արտանետումները՝ արտահայտված տոննաներով մեկ տարվա հաշվով և ըստ արտանետված գազերում այդ նյութերի կոնցենտրացիաների,

գ) արտանետումների կրճատման նպատակով ձեռնարկված և նախատեսվող միջոցները, ինչպես նաև օգտագործվող վառելիքի փոփոխությունները,

դ) շահագործման կարգում արդեն կատարված կամ նախատեսվող փոփոխությունները,

ե) այրման կայանների վերջնական փակումները, որոնք արդեն իրականացվել են կամ նախատեսվում են,

զ) հարկ եղած դեպքում, գոյություն ունեցող կայանների մասով իրականացվող ծրագրերում սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

Տարեկան կտրվածքով արտանետումները և արտանետվող գազերում աղտոտիչների կոնցենտրացիաները որոշելիս անդամ պետությունները պետք է հաշվի առնեն 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածները:

3. Այն անդամ պետությունները, որոնք կիրառում են 5-րդ հոդվածը կամ III հավելվածի ծանոթագրության դրույթները կամ VI.Ա հավելվածի ծանոթագրությունները, պետք է դրա մասին ամեն տարի զեկուցեն Հանձնաժողովին:

#### *Հոդված 16*

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ:

#### *Հոդված 17*

1. 2002 թվականի նոյեմբերի 27-ից ուժը կորցրած է ճանաչվում 88/609/ԵՏՀ Հրահանգը՝ առանց հակասելու 2-րդ պարբերությանը կամ անդամ պետությունների պարտավորություններին, որոնք վերաբերում են ազգային իրավունքում այդ հրահանգի փոխատեղման կամ դրա կիրառության վերջնաժամկետներին, ինչպես թվարկված է սույն փաստաթղթի IX հավելվածում:

2. Մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը լիցենզիա ստացած նոր կայանների դեպքում, ինչպես նշված է սույն Հրահանգի 4(1) հոդվածում, 94/66/ԵՀ հրահանգով փոփոխված 88/609/ԵՏՀ հրահանգի 4(1) հոդվածը, 5(2) հոդվածը, 6-րդ հոդվածը, 15(3) հոդվածը, III, VI, VIII հավելվածները և IX հավելվածի Ա.2 կետը մնում են ուժի մեջ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը, իսկ հետո դրանք ուժը կորցրած են ճանաչվում:

3. Թիվ 88/609/ԵՏՀ հրահանգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին արված հղումներ և ընթերցվեն սույն Հրահանգի X հավելվածում սահմանված համեմատական աղյուսակի համաձայն:

### *Հոդված 18*

1. Անդամ պետությունները մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս դրույթները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում ուղեկցվեն նման հղումով: Այդպիսի հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Գոյություն ունեցող կայանի և նոր կայանի դեպքում, որի լիցենզիան տրվել է 4(1) հոդվածի համաձայն, VIII հավելվածի Ա.2 կետի դրույթները կիրառվում են 2004 թվականի նոյեմբերի 27-ից:

3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

### *Հոդված 19*

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

### *Հոդված 20*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

---

ՀԱՎԵԼՎԱԾ 1

**ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԾԾՄԲԻ ԴԻՕՔՍԻԴԻ (SO2)  
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԸ ԵՎ ԿՐՃԱՏՄԱՆ  
ՆԱԽԱՆՇՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

Անդամ պետությունը	0	1	2	3	4	5	6	7	8	9
	Խոշոր այրման կայաններից ծծմբի դիօքսիդի (SO2) արտանետումները, 1980թ. կիլոտոննա	Արտանետումների առավելագույն սահմանաչափերը (կիլոտոննա/տարի)			Կրճատման տոկոսը՝ 1980թ. արտանետումների նկատմամբ			Կրճատման տոկոսը՝ 1980թ. փոփոխված արտանետումների նկատմամբ		
		Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3
		1993	1998	2003	1993	1998	2003	1993	1998	2003
Բելգիա	530	318	212	159	-40	-60	-70	-40	-60	-70
<a href="#">▼M1</a>										
Բուլղարիա	1 734	1 410	1 300	1 190	-19	-25	-31	-19	-25	-31
<a href="#">▼A1</a>										
Չեխիայի Հանրապետություն	1 408	919	303	155	-35	-79	-89	-35	-79	-89
<a href="#">▼B</a>										
Դանիա	323	213	141	106	-34	-56	-67	-40	-60	-70
Գերմանիա	2 225	1 335	890	668	-40	-60	-70	-40	-60	-70
<a href="#">▼A1</a>										
Էստոնիա	240	123	91	76	-49	-62	-68	-49	-62	-68
<a href="#">▼B</a>										

Հունաստան	303	320	320	320	+6	+6	+6	-45	-45	-45
Իսպանիա	2 290	2 290	1 730	1 440	0	-24	-37	-21	-40	-50
Ֆրանսիա	1 910	1 146	764	573	-40	-60	-70	-40	-60	-70
Իռլանդիա	99	124	124	124	+25	+25	+25	-29	-29	-29
Իտալիա	2 450	1 800	1 500	900	-27	-39	-63	-40	-50	-70

▼A1

Կիպրոս	17	29	32	34	+71	+88	+100	+71	+88	+100
Լատվիա	60	40	30	25	-30	-50	-60	-30	-50	-60
Լիտվա	163	52	64	75	-68	-61	-54	-68	-61	-54

▼B

Լյուքսեմբուրգ	3	1,8	1,5	1,5	-40	-50	-60	-40	-50	-50
---------------	---	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----

▼A1

Հունգարիա	720	429	448	360	-40	-38	-50	-40	-38	-50
Մալթա	12	13	17	14	+14	+51	+17	+14	+51	+17

▼B

Նիդեռլանդներ	299	180	120	90	-40	-60	-70	-40	-60	-70
Պորտուգալիա	115	232	270	206	+102	+135	+79	-25	-13	-34

▼A1

Լեհաստան	2 087	1 454	1 176	1 110	-30	-44	-47	-30	-44	-47
----------	-------	-------	-------	-------	-----	-----	-----	-----	-----	-----

▼M1

Ռումինիա	561	692	503	518	23	-10	-8	23	-10	-8
----------	-----	-----	-----	-----	----	-----	----	----	-----	----

▼A1

Սլովենիա	125	122	98	49	-2	-22	-61	-2	-22	-61
----------	-----	-----	----	----	----	-----	-----	----	-----	-----

Սլովակիա	450	177	124	86	-60	-72	-81	-60	-72	-81
<a href="#">▼B</a>										
Միացյալ Թագավորություն	3 883	3 106	2 330	1 553	-20	-40	-60	-20	-40	-60
Ավստրիա	90	54	36	27	-40	-60	-70	-40	-60	-70
Ֆինլանդիա	171	102	68	51	-40	-60	-70	-40	-60	-70
Շվեդիա	112	67	45	34	-40	-60	-70	-40	-60	-70

ՀԱՎԵԼՎԱԾ II

**ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՋՈՏԻ ՕՔՍԻԴՆԵՐԻ (NOX)  
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԸ ԵՎ ԿՐՃԱՏՄԱՆ  
ՆԱԽԱՆՇՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

Անդամ պետությունը	0	1	2	3	4	5	6
	Խոշոր այրման կայաններից ազոտի օքսիդների (NOX) արտանետումները, 1980թ. կիլոտոննա	Ազոտի օքսիդների (NOX) արտանետումների առավելագույն սահմանաչափերը (կիլոտոննա/տարի)	Կրճատման տոկոսը 1980թ. արտանետումների նկատմամբ	Կրճատման տոկոսը 1980թ. փոփոխված արտանետումների նկատմամբ			
		Փուլ 1	Փուլ 2	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 1	Փուլ 2
		1993թ. (1)	1998թ.	1993թ. (1)	1998թ.	1993թ. (1)	1998թ.
Բելգիա	110	88	66	-20	-40	-20	-40
<a href="#">▼M1</a>							
Բուլղարիա	155	125	95	-19	-39	-19	-39
<a href="#">▼A1</a>							
Չեխիայի Հանրապետություն	403	228	113	-43	-72	-43	-72
<a href="#">▼B</a>							
Դանիա	124	121	81	-3	-35	-10	-40
Գերմանիա	870	696	522	-20	-40	-20	-40
<a href="#">▼A1</a>							
Էստոնիա	20	10	12	-52	-40	-52	-40
<a href="#">▼B</a>							

Հունաստան	36	70	70	+94	+94	0	0
Իսպանիա	366	368	277	+1	-24	-20	-40
Ֆրանսիա	400	320	240	-20	-40	-20	-40
Իռլանդիա	28	50	50	+79	+79	0	0
Իտալիա	580	570	428	-2	-26	-20	-40
<a href="#">▼A1</a>							
Կիպրոս	3	5	6	+67	+100	+67	+100
Լատվիա	10	10	9	-4	-10	-4	-10
Լիտվա	21	8	11	-62	-48	-62	-48
<a href="#">▼B</a>							
Լյուքսեմբուրգ	3	2,4	1,8	-20	-40	-20	-40
<a href="#">▼A1</a>							
Հունգարիա	68	33	34	-51	-49	-51	-49
Մալթա	1,7	7	2,5	+299	+51	+299	+51
<a href="#">▼B</a>							
Նիդեռլանդներ	122	98	73	-20	-40	-20	-40
Պորտուգալիա	23	59	64	+157	+178	-8	0
<a href="#">▼A1</a>							
Լեհաստան	698	426	310	-39	-56	-39	-56
<a href="#">▼M1</a>							
Ռումինիա	135	135	77	-1	-43	-1	-43
<a href="#">▼A1</a>							
Սլովենիա	17	15	16	-12	-6	-12	-6




Սլովակիա	141	85	46	-40	-67	-40	-67
<a href="#">▼B</a>							
Միացյալ Թագավորություն	1 016	864	711	-15	-30	-15	-30
Ավստրիա	19	15	11	-20	-40	-20	-40
Ֆինլանդիա	81	65	48	-20	-40	-20	-40
Շվեդիա	31	25	19	-20	-40	-20	-40
<p>1) Անդամ պետությունները կարող են, ելնելով տեխնիկական նկատառումներից, մինչև երկու տարով հետաձգել 1-ին փուլի ազոտի օքսիդների (NOx) արտանետումների կրճատման ժամկետը՝ սույն Հրահանգով նախատեսված ծանուցումից հետո մեկ ամսվա ընթացքում Հանձնաժողովին ծանուցելու միջոցով:</p>							

### ՀԱՎԵԼՎԱԾ III

## ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ՝ ԾԾՄԲԻ ԴԻՕՔՍԻԴԻ (SO<sub>2</sub>) ՀԱՄԱՐ

### Պիտք վառելիք

Ա. Ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները՝ արտահայտված մգ/նխմ (O<sub>2</sub> պարունակությունը՝ 6 տոկոս), որոնք պետք է նոր և գոյություն ունեցող կայանների կողմից կիրառվեն համապատասխանաբար 4(1) և 4(3) հոդվածի համաձայն.



### Ծանոթագրություն՝

Եթե վառելիքի առանձնահատկությունների պատճառով վերը նշված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը հնարավոր չէ ապահովել, ապա 100 մեգավատ նոմինալ ջերմային հզորությամբ կայանների դեպքում պետք է ապահովվի առնվազն 60 տոկոս ծծմբազերծման գործակից, 100 մեգավատից ավելի ջերմային հզորությամբ կայանների և 300 մեգավատից փոքր կամ հավասար ջերմային հզորությամբ կայանների դեպքում՝ 75 տոկոս, իսկ 300 մեգավատից ավելի

ջերմային հզորությամբ կայանների դեպքում՝ 90 տոկոս: 500 մեգավատից ավելի ջերմային հզորություն ունեցող կայանների համար ծծմբազերծման գործակիցը պետք է լինի առնվազն 94 տոկոս կամ առնվազն 92 տոկոս, եթե պայմանագիր է կնքվել ծխազազերի ծծմբազերծման համապատասխանեցման կամ կրի ներփչման սարքավորման մասին, և դրա տեղադրման աշխատանքներն սկսվել են նախքան 2001 թվականի հունվարի 1-ը:

Բ. Ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները՝ արտահայտված մգ/նխմ (O<sub>2</sub> պարունակությունը՝ 6 տոկոս), որոնք պետք է 4(2) հոդվածի համաձայն կիրառվեն նոր և գոյություն ունեցող կայանների կողմից

Վառելիքի տեսակը	50-100 ՄՎտ ջերմային էներգիա	100-300 ՄՎտ ջերմային էներգիա	> 300 ՄՎտ ջերմային էներգիա
Կենսազանգված	200	200	200
Ընդհանուր դեպք	850	200 (1)	200

1) բացառությամբ «հեռավոր տարածքներին» առնչվող դեպքերի, երբ պետք է կիրառվի 850-ից 200 մգ/նխմ (զծային նվազեցում)

#### Ծանոթագրություն՝


Եթե վառելիքի առանձնահատկությունների պատճառով վերը նշված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը հնարավոր չէ ապահովել, ապա կայանքները պետք է ապահովվեն ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) 300 մգ/նխմ մակարդակ, կամ պետք է ապահովվի առնվազն 92 տոկոս ծծմբազերծման գործակից՝ 300 մեգավատից փոքր կամ հավասար նմինսպ ջերմային հզորությամբ կայանների դեպքում, և առնվազն 95 տոկոս ծծմբազերծման գործակից՝ 300 մեգավատից ավելի ջերմային հզորությամբ կայանների դեպքում կիրառելով 400 մգ/նխմ առավելագույն թույլատրելի սահմանային նորմա:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ՝ ԾԾՄԲԻ ԴԻՕՔՍԻԴԻ (SO<sub>2</sub>) ՀԱՄԱՐ

Հեղուկ վառելիք

Ա. Ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները՝ արտահայտված մգ/նխմ (O<sub>2</sub> պարունակությունը՝ 3 տոկոս), որոնք պետք է նոր և գոյություն ունեցող կայանների կողմից կիրառվեն համապատասխանաբար 4(1) և 4(3) հոդվածի համաձայն



Բ. Ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները՝ արտահայտված մգ/նխմ (O<sub>2</sub> պարունակությունը՝ 3 տոկոս), որոնք պետք է նոր և գոյություն ունեցող կայանների կողմից կիրառվեն 4(2) հոդվածի համաձայն

50-100 ՄՎտ ջերմային էներգիա	100-300 ՄՎտ ջերմային էներգիա	> 300 ՄՎտ ջերմային էներգիա
--------------------------------	---------------------------------	-------------------------------

850	400-ից մինչև 200 (գծային նվազեցում) (1)	200
-----	--	-----

1) բացառությամբ «հեռավոր տարածքներին» առնչվող դեպքերի, երբ պետք է կիրառվի 850-200 մգ/նխմ (գծային նվազեցում)

Կրետե և Ռոդոս կղզիներում տեղակայված 250 մեգավատ ջերմային նոմինալ հզորությամբ երկու կայանքի դեպքում, որոնք պետք է լիցենզավորվեն՝ նախքան 2007 թվականի դեկտեմբերի 31-ը, կիրառվում է 1700 մգ/նխմ նորման:

\_\_\_\_\_

ՀԱՎԵԼՎԱԾ V

ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԾԾՄԲԻ ԴԻՕՔՍԻԴԻ  
(SO<sub>2</sub>) ՀԱՄԱՐ

Գազային վառելիք

Ա. Ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները՝ արտահայտված մգ/նխմ (O<sub>2</sub> պարունակությունը՝ 3 տոկոս), որոնք պետք է նոր և գոյություն ունեցող կայանների կողմից կիրառվեն համապատասխանաբար 4(1) և 4(3) հոդվածի համաձայն

Վառելիքի տեսակը	Սահմանային նորմաները (մգ/նխմ)
Գազային վառելիքներն ընդհանրապես	35
Հեղուկացված գազ	5
Նավթամշակման մնացորդների, կոքսի վառարանների գազի, դոմնային գազերի գազացումից առաջացած ցածր կալորիականությամբ գազեր	800
Ածխի գազացումից առաջացած գազ	(1)

1) Խորհուրդը նման գազերի համար կիրառելի արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները կսահմանի ավելի ուշ՝ Հանձնաժողովից ստացված առաջարկների հիման վրա, որը պետք է արվի՝ հաշվի առնելով հետագա տեխնոլոգիական զարգացումը:

Բ. Ծծմբի դիօքսիդի (SO<sub>2</sub>) արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները՝ արտահայտված մգ/նխմ (O<sub>2</sub> պարունակությունը՝ 3 տոկոս), որոնք պետք է կիրառվեն նոր կայանների կողմից՝ 4(2) հոդվածի համաձայն

Գազային վառելիքներն ընդհանրապես	35
Հեղուկացված գազ	5
Կոքսային վառարաններից առաջացող ցածր կալորիականությամբ գազեր	400
Դոմնային վառարաններից առաջացող ցածր կալորիականությամբ գազեր	200

ՀԱՎԵԼՎԱԾ VI

**ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՆՈՐՄԱՆԵՐ՝ ԱՁՈՏԻ ՕՔՍԻԴՆԵՐԻ (NOx) ՀԱՄԱՐ (ԶԱՓՎԱԾ ՈՐՊԵՍ NO2)**

Ա. Ազոտի օքսիդների (NOx) արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները՝ արտահայտված մգ/նխմ (O2 պարունակությունը՝ 6 տոկոս պինդ վառելիքի համար, 3 տոկոս՝ հեղուկ և գազային վառելիքի համար), որոնք պետք է նոր և գոյություն ունեցող կայանների կողմից կիրառվեն համապատասխանաբար 4(1) և 4(3) հոդվածի համաձայն

Վառելիքի տեսակը	Սահմանային նորմաները (1) (մգ/նխմ)
Պինդ (2), (3):	
50-500 ՄՎտ ջերմային էներգիա	600
> 500 ՄՎտ ջերմային էներգիա	500
2016 թվականի հունվարի 1-ից	
50-500 ՄՎտ ջերմային էներգիա	600
> 500 ՄՎտ ջերմային էներգիա	200
Հեղուկ	
50-500 ՄՎտ ջերմային էներգիա	450
> 500 ՄՎտ ջերմային էներգիա	400
Գազային	
50-500 ՄՎտ ջերմային էներգիա	300
> 500 ՄՎտ ջերմային էներգիա	200

1) Բացառությամբ «հեռավոր տարածքներին» առնչվող դեպքերի, երբ պետք է կիրառվեն հետևյալ սահմանային նորմաները՝

Պինդ ընդհանրապես՝ 650



Պինդ՝ < 10 տոկոս ցնդող նյութերի պարունակությամբ՝ 1 300

Հեղուկ՝ 450

Գազային՝ 350

2) 500 ՄՎտ-ից ավելի նմինալ ջերմային հզորություն ունեցող կայանները, որոնք 2008 թվականից ի վեր չեն շահագործվում տարեկան 2000 ժամից ավելի (հինգ տարվա համար հաշվարկված սահող միջինը), մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը պետք է՝

- 4(3)(ա) հոդվածի համաձայն լիցենզիա ստացած կայանի դեպքում ապահովեն ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային՝ 600 մգ/նխմ նորման (չափված որպես NO<sub>2</sub>),
- 4(6) հոդվածի համաձայն ազգային ծրագրում ընդգրկված կայանի դեպքում իրենց ներդրումն ունենան ազգային ծրագրի իրականացման հարցում՝ գնահատված արտանետումների թույլատրելի սահմանային 600 մգ/նխմ նորմայի հիման վրա:

2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ այն կայանները, որոնք չեն շահագործվում տարեկան 1500 ժամից ավելի (հինգ տարվա համար հաշվարկված սահող միջինը), պետք է ապահովեն ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային՝ 450 մգ/նխմ նորման (չափված որպես NO<sub>2</sub>):

3) Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը 1200 մգ/նխմ նորման է կիրառվում այն կայանների նկատմամբ, որոնք մինչև 2001 թվականի հունվարի 1-ն ընկած 12-ամսյա ժամանակահատվածում շահագործվել են և շարունակում են շահագործվել 10 տոկոսից պակաս ցնդող նյութերի պարունակությամբ պինդ վառելիքով:

Բ. Ազոտի օքսիդների (NO<sub>x</sub>) արտանետումների սահմանային թույլատրելի՝ մգ/նխմ-ով արտահայտված նորմաները, որոնք նոր կայանների կողմից պետք է կիրառվեն 4(2) հոդվածի համաձայն՝ բացառությամբ գազատուրբինների

Պինդ վառելիքներ (O<sub>2</sub> պարունակությունը՝ 6 տոկոս)

Վառելիքի տեսակը	50-100 ՄՎտ	100-300 ՄՎտ	> 300 ՄՎտ
-----------------	------------	-------------	-----------

	ջերմային էներգիա	ջերմային էներգիա	ջերմային էներգիա
Կենսազանգված	400	300	200
Ընդհանուր դեպք	400	200 (1)	200

1) Բացառությամբ «հեռավոր տարածքներին» առնչվող դեպքերի, երբ պետք է կիրառվի 300 մգ/նխմ նորման:

*Հեղուկ վառելիքներ (O2 պարունակությունը 3 տոկոս)*

50-100 ՄՎտ ջերմային էներգիա	100-300 ՄՎտ ջերմային էներգիա	> 300 ՄՎտ ջերմային էներգիա
400	200 (1)	200

1) բացառությամբ «հեռավոր տարածքներին» առնչվող դեպքերի, երբ պետք է կիրառվի 300 մգ/նխմ նորման:

Կրետե և Ռոդոս կղզիներում տեղակայված 250 մեգավատ ջերմային նոմինալ հզորությամբ երկու կայանքի դեպքում, որոնք պետք է լիցենզավորվեն նախքան 2007 թվականի դեկտեմբերի 31-ը, կիրառվում է 400 մգ/նխմ նորման:

*Գազային վառելիքներ (O2 պարունակությունը 3 տոկոս)*

	50-300 ՄՎտ ջերմային էներգիա	> 300 ՄՎտ ջերմային էներգիա
Բնական գազ (ծանոթագրություն 1)	150	100
Այլ գազեր	200	200

## Գազատուրբիններ

4(2) հողվածի համաձայն մեկ գազատուրբինի համար կիրառման ենթակա ազոտի օքսիդների (NOx) արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները՝ արտահայտված մգ/նխմ-ով (O2 պարունակությունը՝ 15 տոկոս) (սահմանային նորմաները կիրառվում են միայն 70 տոկոսից ավելի բեռնվածքի դեպքում)

	> 50 ՄՎտ ջերմային էներգիա (ջերմային հզորությունը ԻՍՕ պայմաններով)
Բնական գազ (Ծանոթագրություն 1)	50 (Ծանոթագրություն 2)
Հեղուկ վառելիքներ (Ծանոթագրություն 3)	120
Գազային վառելիքներ (բնական գազ չհանդիսացող)	120

Այս սահմանային նորմաները չեն կիրառվում արտակարգ դեպքերի համար օգտագործվող այն գազատուրբինների նկատմամբ, որոնք տարեկան 500 ժամից քիչ են շահագործվում: Նման կայանների օպերատորը պարտավոր է ամեն տարի իրավասու մարմին ներկայացնել այդպես օգտագործած ժամանակի մասին:

### Ծանոթագրություն 1

Բնական գազը բնական պաշարներից ստացվող մեթանն է, որի մեջ իներտ գազերի և այլ խառնուրդների ընդհանուր բաղադրությունը չի գերազանցում 20 տոկոսը (ծավալային առումով):

### Ծանոթագրություն 2

75 մգ/նխմ՝ հետևյալ դեպքերում, երբ գազատուրբինի արտադրողականությունը որոշվում է բազային բեռի ISO պայմաններով՝

— ջերմաէլեկտրական համակցված համակարգերով գազատուրբիններ, որոնց ընդհանուր արտադրողականությունը 75 տոկոսից ավելի է,

---

— համակցված ցիկլով կայաններում օգտագործվող գազատուրբիններ, որոնց գումարային էլեկտրական ՕԳԳ-ի տարեկան միջինը գերազանցում է 55 տոկոսը, — գազատուրբիններ՝ մեխանիկական շարժաբեռների համար:

Վերը նշված կատեգորիաներից որևէ մեկին չհամապատասխանող, բայց բազային բեռի ISO պայմաններով որոշված՝ ավելի քան 35 տոկոս ՕԳԳ ունեցող մեկ ցիկլով գազատուրբինների դեպքում սահմանային թույլատրելի նորման կազմում է  $50^* \eta / 35$ , որտեղ « $\eta$ »-ն գազատուրբինի ՕԳԳ-ն է՝ տոկոսային արտահայտությամբ (և բազային բեռի ISO պայմաններով):

### *Ծանոթագրություն 3*

Այս սահմանային նորման կիրառվում է միայն գազատուրբինների բռնկման համար օգտագործվող խառնուրդների և միջին թորամասերի նկատմամբ:

---

ՀԱՎԵԼՎԱԾ VII

**ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՓՈՇՈՒ ՀԱՄԱՐ**

Ա. Փոշու արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները՝ արտահայտված մգ/նխմ-ով (O2 պարունակությունը՝ 6 տոկոս պինդ վառելիքի համար, 3 տոկոս հեղուկ և գազային վառելիքի համար), որոնք պետք է նոր և գոյություն ունեցող կայանների կողմից կիրառվեն համապատասխանաբար 4(1) և 4(3) հոդվածի համաձայն.

Վառելիքի տեսակը	Նոմինալ ջերմային հզորությունը (ՄՎտ)	Արտանետումների թույլատրելի սահմանային նորմաներ (մգ/նխմ)
Պինդ	≥ 500	50 (2)
	< 500	100
Հեղուկ (1)	բոլոր կայանները	50
Գազային	բոլոր կայանները	5՝ որպես կանոն 10՝ դոմնային գազերի համար 50՝ սև մետալուրգիայից ստացվող գազերի համար, որոնք կարող են օգտագործվել այլ նպատակներով

1) 100 մգ/նխմ թույլատրելի սահմանային արտանետումների նորման կարող է կիրառվել 500 ՄՎտ նոմինալ ջերմային հզորությամբ կայանների նկատմամբ, որոնք օգտագործում են հեղուկ վառելիք, որի մեջ մոխրի պարունակությունը կազմում է ավելի քան 0,06 տոկոս:

2) 100 մգ/նխմ թույլատրելի սահմանային արտանետումների նորման կարող է կիրառվել 4(3) հոդվածի համաձայն լիցենզավորված և 500 ՄՎտ-ից ավելի կամ հավասար նոմինալ ջերմային հզորությամբ կայանների նկատմամբ, որոնք օգտագործում են 5 800 կՋ/կգ-ից (նվազագույն ջերմարարություն) պակաս ջերմապարունակությամբ պինդ

վառելիք, որի մեջ խոնավության պարունակությունը 45 տոկոս է՝ ըստ քաշի, խոնավության և մոխրի գումարային պարունակությունը 60 տոկոս է՝ ըստ քաշի, իսկ կալցիումի օքսիդի պարունակությունը 10 տոկոսից ավելի է:

- Բ. Փոշու արտանետումների սահմանային թույլատրելի՝ մգ/նխմ–ով արտահայտված նորմաները, որոնք նոր կայանների կողմից պետք է կիրառվեն 4(2) հոդվածի համաձայն՝ բացառությամբ գազատուրբինների. .

*Պինդ վառելիք (Օ2 պարունակությունը՝ 6 տոկոս)*

50-100 ՄՎտ ջերմային էներգիա	> 100 ՄՎտ ջերմային էներգիա
50	30

*Հեղուկ վառելիք (Օ2 պարունակությունը՝ 3 տոկոս)*

50-100 ՄՎտ ջերմային էներգիա	> 100 ՄՎտ ջերմային էներգիա
50	30

Կրետե և Ռոդոս կղզիներում տեղակայված՝ 250 ՄՎտ նոմինալ ջերմային հզորությամբ երկու կայանքի դեպքում, որոնք, նախքան 2007 թվականի դեկտեմբերի 31–ը, պետք է լիցենզավորվեն, կիրառվում է 50 մգ/նխմ արտանետումների թույլատրելի սահմանային նորման:

*Գազային վառելիք (Օ2 պարունակությունը՝ 3 տոկոս)*

Որպես կանոն	5
Դոմնային գազերի համար	10
Սև մետալուրգիայից ստացվող գազերի համար, որոնք կարող են օգտագործվել այլ նպատակներով	30

**ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ**

**Ա. Այրման կայաններից արտանետումների չափման և գնահատման կարգը**

*1. Մինչև 2004 թվականի նոյեմբերի 27-ը*

Ծծմբի դիօքսիդի, փոշու, ազոտի օքսիդների կոնցենտրացիաները պետք է չափվեն մշտական կարգով՝ 4(1) հոդվածի համաձայն լիցենզավորված 300 ՄՎտ նոմինալ ջերմային հզորություն ունեցող կայանների դեպքում: Այնուամենայնիվ, ծծմբի դիօքսիդի և փոշու դիտանցումը կարող է սահմանափակվել պարբերական չափումներով կամ հաշվարկման համապատասխան այլ ընթացակարգերով այն դեպքերում, երբ այդ չափումները կամ ընթացակարգերը որոնք ենթակա են իրավասու մարմնի կողմից ստուգման և հաստատման, կարող են կիրառվել կոնցենտրացիայի մակարդակը ստանալու համար:

Առաջին պարբերությունում չընդգրկված նոր կայանների դեպքում, որոնց լիցենզիան տրվել է 4(1) հոդվածի համաձայն, իրավասու մարմինները կարող են պահանջել, որ անհրաժեշտության դեպքում այդ երեք աղտոտիչի համար մշտական չափումներ անցկացվեն : Այն դեպքում, երբ մշտական չափումներ չեն պահանջվում, ապա կանոնավորապես կիրառվում են իրավասու մարմնի կողմից հաստատված պարբերական չափումները կամ հաշվարկման համապատասխան այլ ընթացակարգեր՝ արտանետումներում առկա վերը նշված նյութերի քանակը հաշվարկելու համար:

*2. Սկսած 2002 թվականի նոյեմբերի 27-ից և առանց հակասելու 18(2) հոդվածին*

Իրավասու մարմինները պետք է պահանջեն, որ 100 ՄՎտ կամ ավելի նոմինալ ջերմային հզորությամբ յուրաքանչյուր այրման կայանից արտանետվող գազերում առկա ծծմբի դիօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու կոնցենտրացիաները ենթարկվեն մշտական չափումների:

Առաջին պարբերությունից շեղում կատարելով՝ մշտական չափումները կարող են չպահանջվել հետևյալ դեպքերում՝

- 10 000 շահագործման ժամից պակաս տևողություն ունեցող այրման կայաններից,
- բնական օգտագործող կաթսաներից կամ բնական օգտագործող գազատուրբիններից արտանետվող ծծմբի դիօքսիդի և փոշու դեպքում,
- ծծմբի հայտնի պարունակությամբ նավթ օգտագործող գազատուրբիններից կամ կաթսաներից արտանետվող ծծմբի դիօքսիդի դեպքում, եթե չկա ծծմբազերծման սարքավորում,
- կենսազանգված վառող կաթսաներից արտանետվող ծծմբի դիօքսիդի դեպքում, եթե օպերատորը կարող է ապացուցել, որ ծծմբի դիօքսիդի արտանետումները ոչ մի պարագայում չեն կարող արտանետումների թույլատրելի սահմանային նորմայից բարձր լինել:

Մշտական չափումներ չպահանջվելու դեպքում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ պետք է պարբերական չափումներ պահանջվեն : Որպես այլընտրանքային տարբերակ՝ արտանետումներում առկա վերը նշված աղտոտիչների քանակները որոշելու համար կարող են կիրառվել իրավասու կողմից պարտադիր կերպով ստուգված և հաստատված՝ հաշվարկման համապատասխան այլ ընթացակարգեր: Նման ընթացակարգերում պետք է օգտագործվեն համապատասխան ՍԵԿ ստանդարտները, հենց որ դրանք առկա լինեն: Եթե ՍԵԿ ստանդարտներն առկա չեն, ապա կիրառվում են ISO ստանդարտները, ազգային կամ միջազգային ստանդարտները, որոնցով պետք է ապահովվի համարժեք գիտական մեթոդով ստացված տվյալների տրամադրումը:

3. Այն կայանների դեպքում, որոնք պետք է ապահովեն 5(2) հոդվածով և III հավելվածով սահմանված ծծմբազերծման գործակիցների հետ համապատասխանությունը, կիրառվում է 2-րդ պարբերությամբ սահմանված՝ ծծմբի դիօքսիդի արտանետումների չափումներին վերաբերող պահանջը: Ավելին, այրման կայանի կայանքներ լցվող վառելիքում ծծմբի պարունակությունը պետք է պարբերաբար դիտանցման ենթարկվի:



4. Իրավասու մարմինները պետք է տեղեկացվեն օգտագործվող վառելիքի կամ կայանի շահագործման ռեժիմի էական փոփոխությունների մասին: Նրանք պետք է որոշեն, թե արդյոք սահմանված դիտանցման՝ 2-րդ պարբերությամբ սահմանված պահանջները դեռ համարժեք են, թե պահանջվում է դրանց համապատասխանեցում:
5. 2-րդ պարբերության համաձայն անցկացվող մշտական չափումներում պետք է ընդգրկվեն թթվածնի բաղադրության, ջերմաստիճանի, ճնշման և ջրի գոլորշիների բաղադրությանը վերաբերող համապատասխան տեխնոլոգիական պրոցեսի ցուցանիշները: Արձակված գազերում ջրի գոլորշիների բաղադրության մշտական չափումները պարտադիր չեն՝ պայմանով, որ նմուշառված արձակված գազը չորացվի՝ նախքան արտանետումների լաբորատոր հետազոտությունը:

Ներկայացուցչական չափումները, այսինքն՝ աղտոտիչների և տեխնոլոգիական ցուցանիշների նմուշառումն ու լաբորատոր հետազոտությունը, ինչպես նաև չափման ավտոմատացված համակարգերի չափաբերման էտալոնային չափման մեթոդները, պետք է անցկացվեն ՍԵԿ ստանդարտներին համապատասխան, հենց որ դրանք առկա լինեն: Եթե ՍԵԿ ստանդարտներն առկա չեն, ապա կիրառվում են ISO ստանդարտները, ազգային կամ միջազգային ստանդարտները, որոնցով պետք է ապահովվի համարժեք գիտական մեթոդով ստացված տվյալների տրամադրումը:

Մշտական չափման մեխանիզմները պետք է ենթակա լինեն ստուգման առնվազն տարին մեկ անգամ՝ էտալոնային մեթոդներով անցկացվող զուգահեռ չափումների միջոցով:

6. Մեկ չափված արդյունքի 95% վստահության միջակայքի արժեքները չպետք է գերազանցեն արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետևյալ տոկոսները.

Ծծմբի դիօքսիդ 20 %

Ազոտի օքսիդներ 20 %

Փոշի 30 %

Ժամային և օրական կտրվածքով վալիդացված միջին նորմաները պետք է որոշվեն ժամային և օրական կտրվածքով չափված՝ վավեր (թույլատրելի) արժեքներից՝ վերը նշված վստահության միջակայքի արժեքը հանելուց հետո:

Եթե օրվա ընթացքում ավելի քան երեք միջին-ժամային տվյալ իրականությանը չի համապատասխանում չափիչ սարքավորման խափանման կամ ընթացիկ վերանորոգման պատճառով, ապա այդ օրվա տվյալները համարվում են անվավեր: Տարվա ընթացքում նման իրավիճակների պատճառով տասից ավելի օրվա տվյալները անվավեր համարվելու դեպքում իրավասու մարմինը պետք է պահանջի, որ օպերատորը համարժեք միջոցներ ձեռնարկի՝ մշտական չափումների համակարգի հուսալիության բարելավման համար:

#### **Բ. Այրման կայանների ընդհանուր տարեկան արտանետումների չափի որոշումը**

Մինչև և ներառյալ 2003 թվականը՝ իրավասու մարմինները պետք է ունենան այրման կայաններից ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդների արտանետումների տարեկան ընդհանուր ծավալի որոշված չափը: Եթե կիրառվում է մշտական դիտանցման ռեժիմը, ապա այրման կայանի օպերատորը պետք է յուրաքանչյուր աղտոտիչի համար առանձին հաշվարկի ամեն օր արտանետվող աղտոտիչի զանգվածը՝ արտանետվող գազերի հոսքի ծավալային արագության հիման վրա: Եթե չի կիրառվում մշտական դիտանցման ռեժիմը, ապա արտանետումների ընդհանուր տարեկան ծավալը որոշվում է օպերատորի կողմից Ա.1 պարբերության հիման վրա՝ իրավասու մարմինների պահանջները բավարարելու համար:

Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են նոր այրման կայաններից ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդների տարեկան արտանետումների ընդհանուր ծավալի մասին Գ.3 պարբերությամբ պահանջվող տեղեկատվության հետ միևնույն ժամանակ, որը վերաբերում է գոյություն ունեցող կայաններից արտանետումների տարեկան ընդհանուր ծավալին:

Անդամ պետությունները, սկսած 2004 թվականից և հաջորդ յուրաքանչյուր տարվա համար, պետք է ստեղծեն բոլոր 50 ՄՎտ կամ ավելի նոմինալ ջերմային հզորությամբ

այրման կայաններից արտանետվող ծծմբի դիօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու արտանետումների կադաստր: Իրավասու մարմինը տվյալ տարածքում մեկ օպերատորի կողմից շահագործվող յուրաքանչյուր կայանի համար պետք է ստանա հետևյալ տվյալները՝

- ծծմբի դիօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու ընդհանուր տարեկան արտանետումները (ըստ ընդամենը կախված մասնիկների),
- օգտագործվող էներգիայի՝ նվազագույն ջերմարարության հետ կապված տարեկան կտրվածքով ընդհանուրը՝ դասակարգված ըստ վառելիքի հինգ կատեգորիայի. կենսազանգված, այլ պինդ վառելիք, հեղուկ վառելիք, բնական գազ, այլ գազեր:

Այդ հաշվառման արդյունքների ամփոփագիրը, որտեղ առանձին ցույց են տրվում նավթամշակման գործարաններից արտանետումները, պետք է Հանձնաժողով ուղարկվի յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ տվյալ երեքամյա ժամկետի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում: Ըստ յուրաքանչյուր կայանի՝ ներկայացված տարեկան տվյալները Հանձնաժողովին են տրամադրվում նման պահանջի դեպքում: Հանձնաժողովը անդամ պետություններ է ներկայացնում հաշվառված տվյալների համեմատության և գնահատման ամփոփումը՝ ազգային հաշվառած տվյալների ստացումից հետո տասներկու ամսվա ընթացքում:

Սկսած 2008 թվականի հունվարի 1-ից՝ անդամ պետություններն ամեն տարի կայանի շահագործման մնացած ժամկետի՝ օգտագործած և չօգտագործած թույլատրվող ժամանակի մասին փաստաթղթի հետ միասին Հանձնաժողով զեկույց են ներկայացնում գոյություն ունեցող այն կայանների մասին, որոնց համապատասխանելիությունը ճանաչվել է 4(4) հոդվածի համաձայն:

#### **Գ. Մինչև և ներառյալ 2003 թվականը գոյություն ունեցող կայաններից արտանետումների տարեկան ընդհանուր ծավալի որոշումը**

1. Սկսած 1990 թվականից և հաջորդ յուրաքանչյուր տարվա համար՝ ներառյալ 2003 թվականը, անդամ պետությունները պետք է ստեղծեն գոյություն ունեցող այրման

կայաններից արտանետումների ամբողջական կադաստր՝ ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդների համար՝

- ըստ յուրաքանչյուր կայանի՝ 300 ՄՎտ–ից ավելի ջերմային հզորություն ունեցող կայանների համար և նավթամշակման գործարանների համար,
- ընդհանուր կարգով՝ այլ կայանների համար, որոնց վրա տարածվում է սույն Հրահանգը:

2. Այդ հաշվառումների համար կիրառվող մեթոդոլոգիան պետք է համապատասխան լինի այն մեթոդոլոգիայի հետ, որը 1980 թվականին կիրառվում էր այրման կայաններից արտանետվող ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդների ծավալը որոշելու նպատակով :
3. Այդ կադաստրի տվյալները համակարգված և ամբողջական փոխանցվում են Հանձնաժողովին տվյալ տարվա ավարտից հետո ինն ամսվա ընթացքում: Արտանետումների նման կադաստրների կազմման ստեղծման համար կիրառվող մեթոդաբանությունն ու մանրամասն բազային տեղեկությունները նման պահանջի դեպքում պետք է ներկայացվեն Հանձնաժողով:
4. Հանձնաժողովը պարբերաբար կազմակերպում է ազգային կադաստրների համեմատություն և արտանետումների կադաստրների կազմման մեթոդաբանությունների վերաբերյալ Խորհուրդ հարկ եղած դեպքում առաջարկություն է ներկայացնում՝ ելնելով սույն Հրահանգի արդյունավետ կիրարկման անհրաժեշտությունից:

ՀԱՎԵԼՎԱԾ IX

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶՎԱԾ ՀՐԱՀԱՆԳԻ ՓՈԽԱՏԵՂՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՐԿՄԱՆ  
ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆԵՐԸ

(նշված է 17(1) հոդվածում)

Հրահանգ	Փոխատեղման վերջնաժամկետները	Կիրառության վերջնաժամկետները
88/609/ԵՏՀ (ՊՏ L 336, 07.12.1988թ., էջ 1)	1990 թվականի հունիսի 30	1990 թվականի հուլիսի 1 1990 թվականի դեկտեմբերի 31 1993 թվականի դեկտեմբերի 31 1998 թվականի դեկտեմբերի 31 2003 թվականի դեկտեմբերի 31
94/66/ԵՀ (ՊՏ L 337, 24.12.1994թ., էջ 83)	1995 թվականի հունիսի 24	

ՀԱՎԵԼՎԱԾ X

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

(նշված է 17(3) հոդվածում)

Սույն Հրահանգը	Հրահանգ 88/609/ԵՏՀ
Հոդված 1	Հոդված 1
Հոդված 2	Հոդված 2
Հոդված 3	Հոդված 3
Հոդված 4(1)	Հոդված 4(1)
Հոդված 4(2), (3) և (4)	
Հոդված 4(5)	Հոդված 4(3)
Հոդված 4(6), (7) և (8)	
Հոդված 5	Հոդված 5
	Հոդված 6
Հոդված 6	
Հոդված 7	Հոդված 8
Հոդված 8	Հոդված 9
Հոդված 9	Հոդված 10
Հոդված 10	Հոդված 11
Հոդված 11	Հոդված 12
Հոդված 12	Հոդված 13(1)
Հոդված 13	Հոդված 14

Հոդված 14	Հոդված 15
Հոդված 15(1), (2) և (3)	Հոդված 16(1), (2) և (4)
Հոդված 16	
Հոդված 17	
Հոդված 18(1), առաջին ենթապարբերություն և (3)	Հոդված 17(1) և (2)
Հոդված 18(1), երկրորդ ենթապարբերություն և (2), ու հոդված 19	
Հոդված 20	Հոդված 18
Հավելվածներ I–VIII	Հավելվածներ I–IX
Հավելվածներ IX և X	—

(1) ՊՏ C 300, 29.09.1998թ., էջ 6, ՊՏ C 212 E, 25.07.2000թ., էջ 36

(2) ՊՏ C 101, 12.04.1999թ., էջ 55

(3) Եվրոպական պառլամենտի 1999 թվականի ապրիլի 14-ի եզրակացություն (ՊՏ C 219, 30.07.1999թ., էջ 175), Խորհրդի 2000 թվականի նոյեմբերի 9-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 375, 28.12.2000թ., էջ 12) և Եվրոպական պառլամենտի 2001 թվականի մարտի 14-ի որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չիրապարակված): Եվրոպական պառլամենտի 2001 թվականի սեպտեմբերի 20-ի որոշում և Խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 27-ի որոշում:

(4) ՊՏ L 336, 07.12.1988թ., էջ 1: Խորհրդի 94/66/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 337, 24.12.1994թ., էջ 83):

(5) ՊՏ C 138, 17.05.1993թ., էջ 1:

(6) ՊՏ L 257, 10.10.1996թ., էջ 26:

(7) ՊՏ L 27, 30.01.1997թ., էջ 20

(8) ՊՏ C 76, 11.03.1997թ., էջ 1:

(9) ՊՏ L 163, 14.06.1989թ., էջ 32:

(10) ՊՏ L 203, 15.07.1989թ., էջ 50:

(11) ՊՏ L 365, 31.12.1994թ., էջ 34:

(12) ՊՏ L 296, 21.11.1996թ., էջ 55:

(13) Տես՝ Պաշտոնական տեղեկագրի սույն թողարկման 22-րդ էջը:

(14) ՊՏ L 140, 05.06.2009թ., էջ 114:

(15) ՊՏ L 175, 05.07.1985թ., էջ 40: Խորհրդի 97/11/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 73, 14.03.1997թ., էջ 5):

(16) Լրացուցիչ արտանետումները կարող են առաջանալ՝ պայմանավորված 1987 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո թույլատրված հզորությամբ:

(17) Նախքան 1987 թվականի հուլիսի 1-ը արտոնված՝ սակայն մինչև այդ ամսաթիվը դեռ չչահագործվող այն այրման կայաններից արտանետումները, որոնք հաշվի չեն առնվել սույն հավելվածով նախատեսված՝ արտանետումների առավելագույն սահմանաչափերը սահմանելիս, պետք է կամ համապատասխանեն սույն Հրահանգով նոր կայանների համար սահմանված պահանջներին կամ հաշվարկվեն գոյություն ունեցող կայաններից արտանետումների ընդհանուր հաշվարկում, որոնք չպետք է գերազանցեն սույն հավելվածով սահմանված առավելագույն սահմանաչափերը:

(18) Լրացուցիչ արտանետումները կարող են առաջանալ՝ պայմանավորված 1987 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո թույլատրված հզորությամբ:

(19) Նախքան 1987 թվականի հուլիսի 1-ն արտոնված՝ սակայն մինչև այդ ամսաթիվը դեռ չչահագործվող այն այրման կայաններից արտանետումները, որոնք հաշվի չեն առնվել սույն հավելվածով նախատեսված՝ արտանետումների առավելագույն սահմանաչափերը սահմանելիս, պետք է կամ համապատասխանեն սույն Հրահանգով նոր կայանների համար



սահմանված պահանջներին կամ հաշվարկվեն գոյություն ունեցող կայաններից արտանետումների ընդհանուր հաշվարկում, որոնք չպետք է գերազանցեն սույն հավելվածով սահմանված առավելագույն սահմանաչափերը: